Նամակ-Հրավեր

Ամսաթիվ՝	6 նոյեմբերի 2015թ.
Վարկ Թիվ և անվանում՝	3150-ARM՝ «Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցում» ծրագիր
Պայմանագիր Թիվ՝	ADB-L3150-ARM/EPSO/ICB ***ԿԿՈՒՏՀ/ԷԿՀ Փաթեթ՝«ԿԿՈՒՏՀ և ԷԿՀ ընդլայնում և արդիականացում» ծրագիր***
Առաջարկների ներկայացման վերջնաժամկետ՝	2 փետրվարի 2016թ., 10:00 (տեղական ժամանակ)

1. Հայաստանի Հանրապետությունը ստացել է ֆինանսավորում Ասիական Զարգացման Բանկից (ԱԶԲ) "Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցում" ծրագրի, Վարկ 3150-ARM (SF), համար և մտադիր է վարկի մի մասը օգտագործել Կարգավարական կառավարման ու տվյալների հավաքագրման/Էներգիայի կառավարման համակարգ (ԿԿՈՒՏՀ/ԷԿՀ (SCADA/EMS)) փաթեթի՝ "ԿԿՈՒՏՀ/ԷԿՀ համակարգի արդիականացում և ընդլայնում" ծրագրի պայմանագրի ներքո վճարումների համար: Գնումները բաց են ԱԶԲ-ի բոլոր իրավասու երկրների համար:

2. "Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը" (ԷԷՀՕ) ("Գործատու") հրավիրում է ԱԶԲ անդամ երկրներից իրավասու Մրցույթի մասնակիցներին՝ ներկայացնելու փակ առաջարկներ՝ ԿԿՈՒՏՀ/ԷԿՀ և Կապի համակարգերի կառուցման և ավարտման աշխատանքների համար, որոնք հիմնականում ներառում են՝ Կարգավարական Կառավարման Կենտրոնի համակարգչային սարքավորման և ծրագրային ապահովման մատակարարում, որը պետք է ծառայի որպես ամբողջովին կրկնորդված կոնֆիգուրացիա ունեցող ԿԿՈՒՏՀ/ԷԿՀ Համակարգ, որը նախատեսված է որպես Ազգային Կարգավարական Կենտրոն 24ժ/7օր, անընդհատ, աշխատանքի համար, ԿԿՈՒՏՀ և Էներգիայի Կառավարման (ԷԿՀ) ծրագրային փաթեթի ապահովում՝ Հայաստանի էներգահամակարգի վերահսկման և օպտիմիզացման համար, գոյություն ունեցող Հեռակապի Համակարգի ընդլայնում և արդիականցում, նոր RTU-(հեռուստամեխանիկայի հեռակառավարվող սարքերի) տեղադրում, RTU-երի ինտեգրում, Կարգավարական Կառավարման Կենտրոնից հարևան երկրների կարգավարական կենտրոնների միջև կապի հաստատում Standard Protocol IEC 60870-6 ICCP-ի միջազգային ստանդարտ պրոտոկոլի միջոցով, Հեռախոսային համակարգի փոխարինում/արդիականղում, Կարգավարական Կենտրոնի լուսավորության վերանորոգում, պահեստամասերի և հատուկ գործիքների մատակարարում և այլն, ինչպես նաև, շինարարական աշխատանքների մանրամասն նախագծում արտադրություն, առաքում, տեղադրում, փորձարկում, շահագործման հանձնում, լարման տակ դնելու աշխատանքներ և ծառայություններ, և լիարժեք վերապատրաստում՝ լիավարտ հիմունքներով պայմանագրի ներքո, ինչպես մանրամասն ներկայացված և սահմանված է Մրցութային Փաստաթղթերում:

3. Միջազգային մրցակցային սակարկությունները կանցկացվեն համաձայն ԱԶԲ-ի Մեկ Փուլով, Մեկ Ծրարով ներկայացվող Մրցութային առաջարկների ընթացակարգով, և բաց է բոլոր իրավասու երկրները ներկայացնող Մրցույթի մասնակիցների համար, ինչպես նկարագրված է Մրցութային Փաստաթղթերում:

4. Պահանջվող հիմնական որակավորման չափորոշիչները, այլ չափորոշիչների հետ մեկտեղ, հետևյալն են՝
Մասնակցություն որպես կապալառու կամ Համատեղ Ձեռնարկության գործընկեր, առնվազն երկու (2) լիավարտ պայմանագրում վերջին տասը (10) տարվա ընթացքում (2005,2006, 2007, 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013 և 2014), յուրաքանչյուրի արժեքը առնվազն 9.5 մլն ԱՄՆ

Դոլար, որոնք հաջողությամբ ավարտվել կամ հիմնականում ավարտվել են, և, որոնք համանման են առաջարկվող սարքավորումներին և ծառայություններին: Համանմանությունը պետք է հիմնված լինի ֆիզիկական չափերի, բարդության, մեթոդների, տեխնոլոգիաների և այլ բնութագրիչների վրա, ինչպես նկարագրված են մրցութային փաստաթղթերում:

5. Լրացուցիչ տեղեկություն ստանալու և Մրցութային Փաստաթղթերը զննելու համար, մրցույթի մասնակիցները պետք է դիմեն՝

Պրն. Մնացական Մնացականյան
Գլխավոր տնօրեն
Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր (ԷԷՀՕ)
Հայաստանի Հանրապետություն
Ք. Երևան 0009, Աբովյան 27
Հեռ.: +374 10 524725, Ֆաքս +374 10 547317,
Էլ. փոստի հասցե: epso.projects@energyoperator.am

6. Մրցութային Փաստաթղթեը անգլերեն լեզվով ձեռքբերելու համար իրավասու Մրցույթի մասնակիցները պետք է՝

- Գրավոր դիմեն վերընշված հասցեով ADB 3150-ARM/EPSO/ICB Մրցութային Փաստաթղթերի համար
- Վճարեն չվերադարձվող 300 ԱՄՆ Դոլար գումար
- Գինը ներառում է փաստաթղթերի մեկ լրակազմ՝ տպագրված և էլեկտրոնային տեսքով՝ ձայնագրված CD սկավառակի վրա: Մրցութային Փաստաթղթերի էլեկտրոնային և տպագրված տարբերակների միջև տարաձայնությունների դեպքում գերակայությունը տրվում է թղթային տարբերակին:
- Առանձին սուրհանդակային ծառայության վճարումը չի կատարվում Մրցույթի մասնակցի կողմից: Վճարման եղանակը կլինի կանխիկ կամ բանկային փոխանցում հաշվեհամարին: Գործատուի բանկային հաշվեհամարը հետևյալն է՝

Բանկի անվանումը՝ Արդշինինվեստբանկ Աղասյան մասնաճյուղ
Swift՝ ASHBAM22
Ում՝ Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր (ԷԷՀՕ) ՓԲԸ
Հաշվեհամար՝ 2474600497000050
Թղթակցային բանկ՝ CITIBANK, NA
Թղթակցային հաշիվ՝ 36209105
Swift՝ CITIUS33

Գործատուն պատասխանատվություն չի կրում որևէ ծախսերի համար, որոնք Մրցույթի մասնակիցները կկրեն իրենց առաջարկների նախապատրաստման և առաքման համար:

7. Ներկայացնել ձեր առաջարկը՝
- 5-րդ կետում նշված հասցեով
- 2016թ-ի փետրվարի 2-ին ժամը 10:00 վերջնաժամկետին կամ դրանից առաջ,
- Առաջարկի հետ միասին պետք է լինի Մրցութային Առաջարկի Երաշխիքային ապահովումը/Մրցութային առաջարկի երաշխավորման հայտարարությունը, ինչպես նկարագրված է Մրցութային Փաստաթղթերում

Առաջարկները կբացվեն Մրցութային Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետից անմիջապես հետո Գործատուի Խորհրդակցությունների Դահլիճում (սենյակ համար 202) Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Աբովյան փողոց 27 հասցեով, մասնակցելու ցանկություն հայտնած մրցույթի մասնակիցների ներկայացուցիչների ներկայությամբ:

Ուշացված Մրցութային առաջարկները կմերժվեն: